

Ա. ԿժՈՅԱՆ

Ն. Մ. ԱՄԲՈՂԻԿԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁԸ

Վերջերս, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Ձեռագրատան (Մատենադարանի) և Մոսկվայի Լենինի անվան գրադարանի ձեռագրական բաժնի հայերեն ձեռագրերի ֆոնդում հայտնաբերվեցին XVIII դարի երկրորդ կեսի նշանավոր ոուս գիտնական, բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Նեստոր Մակսիմովիչ Ամբողիկի երկու մեծարժեք աշխատությունների՝ 19-րդ դարի սկզբներում կատարված հայերեն թարգմանությունները:

Ինչպես հայտնի է, մինչ այդ ոուսերենից հայերեն թարգմանվել ու մասամբ հրատարակվել էին պատմա-եկեղեցական գեղարվեստական բնույթի որոշ գործեր: Ն. Մ. Ամբողիկի երկերի հայերեն թարգմանություններով սկիզբ է դրվում հայ հասարակությունը ոուսական առաջագիմական բժշկագիտական մտքի հետ ծանոթացնելու, նրանից սովորելու և մեր երկրում բժշկական սանիտարական առողջասլահական գործը գիտական հիմքերի վրա դնելու աշխատանքին:

Ն. Մ. Ամբողիկը (1744—1812 թթ.) ոուս գիտնական է: Նա հանդիսանում է Ռուսաստանում մանկաբարձության, բուսաբանության և ֆիտոթերապիայի հիմնադիրներից մեկը: «...Նեստոր Ամբողիկի վիթխարի ծառայությունը հանդիսանում է 1784—86 թթ. մանկաբարձության վերաբերյալ նրա կազմած արժեքավոր ձեռնարկը՝ XVIII դարի այդ բնագավառի լավագույն աշխատությունը: Մանկաբարձությանը նվիրված իր վիպյուն աշխատությունների շնորհիվ Ամբողիկը ստանում է ռուսական մանկաբարձության հայր՝ կոչում...»¹: Նա եղել է մեծ գիտնական նորարար, գրել է բազմաթիվ գիտական աշխատություններ, որոնցից 12-ը մենագրական: Նեստոր Մակսիմովիչը առաջինն էր, որն իր դասախոսությունները սկսեց տանել ցուցադրական ձևով, նա մանկաբարձական պրակտիկայում սկսեց կիրառել իր առաջարկած ակցանը: Ամբողիկը համարձակորեն հարց էր առաջ քաշում՝ ոուսներից պատրաստել բժշկական մասնագետ կադրեր, պատճառաբանելով, որ հայրենական բժիշկները քաջ ծանոթ լինելով իրենց ժողովրդի սովորություններին և նիստ ու կացին, ավելի լավ կսպասարկեն նրա առողջապահությանը, քան օտարերկրյա պատահական բժիշկները: Ի դեպ, Արևմտյան Եվրոպայի բժիշկները գալով Ռուսաստան, ամեն կերպ աշխատում էին արգելք հանդիսանալ ոուսներից ազգային կադրեր պատրաստելու գործին: Այդ տեսակետից չափազանց բնորոշ է նաև անգլիացի բժիշկ Դեմեկիսի Պետրոս I-ին գրած նամակը, որտեղ նա ճիգ է գործ դնում

¹ БСЭ, т 2, 1950.

Պետրոս I-ին համոզելու, որ ուսաները ընդունակ չեն այնքան բարձր գիտությունը զբաղվելու, ինչպիսին է բժշկագիտությունը¹։

Նեստոր Մակսիմովիչը առաջիններից մեկն է եղել ոուս գիտնականներից, որ խախտելով ընդունված տրագիցիան իր գասախոսությունները կատարել է ոչ թե լատիներեն կամ գերմաներեն, այլ ոուսերեն լեզվով։ Ն. Մ. Ամրոգիկը Դանիլո-Սամեյլովիչի, Ս. Զիրելինի, Գ. Շչեպինի և ուրիշների հետ միասին, գաստիարակվելով Լոմոնոսովի դեմոկրատական մատերիալիստական հայացքներով, իր գործունեությամբ կապված էր ժողովրդի հետ և իր գիտությամբ աշխատում էր օգտակար լինել նրան։

Ահա ոուսական բժշկության այս խոշոր ներկայացուցիչն է, որ գրավել է XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին Ռուսաստանի հայարնակ վայրերում՝ Նոր-նախիջևանում, Ղրիմում, Մոսկվայում, Աստրախանում և այլն, հաստատված հայ բժիշկների և մտավորականների ուշադրությունը։

Ն. Մ. Ամրոգիկի աշխատություններից հայերեն են թարգմանվել՝

ա) «Врачебное веществословие...», «Բժշկական բուսարանություն...» աշխատության երկու գրքերը և բ) «Физиология или естественная история о человеке...», «Ֆիզիոլոգիա և սաղմնաբանություն...» աշխատությունը։

Սրանցից առաջինը թարգմանվել է 1808 թ. Լրիմի՝ Ղարասու-Բազար քաղաքում Նոր-նախիջևանի բժիշկ Կարապետ Մանուկյանի (որը ամենայն հավանականությամբ ոուսական բժշկագիտության սան է եղել) խրախուսմամբ և Սրապիոն Առաքելյանի օգնությամբ։ Հիշյալ թարգմանություն՝ «Բժշկական բուսարանություն...» երկրորդ գիրքը ձեռագիր վիճակում ներկայումս պահվում է Մոսկվայի Լենինի անվան գրադարանի ձեռագրական բաժնի հայկական ֆոնդում (№ 8 ձեռագիր) և կրում է հետևյալ վերնագիրը։

«Բժշկական բնախոսություն կամ գրություն առողջարար բուսոց գործածեցեալ ի կերակուրս և ի դեղորայս՝ յայտ առնելով նոցին շահն և գործածումն կերպաւորելով զպատկերսն բնական իւրաքանչիւր բուսոց տեսական, ըստ բարձրագոյն հրամանի յօրինեաց Նեստոր Մագիսմովիչ Ամրոգիկ բժշկական արհեստի դոկտոր և պրոֆեսոր»։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

(Թարգմանված 1785 թ. Ս. Պետերբուրգի հրատարակությունից) թարգմանչի հիշատակարանը գտնվում է ձեռագրի 143ա էջում։ Մի ոուսաց լեզու է ի հայ լեզու թարգմանեալ տւարտեցաւ ի 1808 և ի վիտրովարի 20-ի Կարասու քաղաք Ղրիմո, ձեռամբ, գրութեամբ և թարգմանութեամբ Սրապիոն սարկաւազ Առաքելեան Բօղդանովե. վասն ճարտար բժիշկ աղա Կարապետ Մանուկեանի ի յիշատակ ինքեան և իւրայոց²։

Այս նույն աշխատության երրորդ գիրքը թարգմանված է նույնպես

¹ Н. А. Семашко, Очерки по истории развития медицины в Москве. Очерки об организации здравоохранения в Москве за 800 лет, 1948, Москва, стр. 10.

² Մոսկվայի Լենինի անվան գրադարանի հայկական ձեռագրերի ֆոնդում պահվող № 8 ձեռագրի վերաբերյալ վերը բերված նյութը մեզ տրամադրել է Պատ. գիտ. թեկնածու Լ. Սաչիկյանը, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը։

Սրապիոն Առաքելյանի կողմից 1809 թվականին՝ Այդ թարգմանության ձեռագիրը պահվում է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Ձեռագրատան (Մատենադարան) № 9285-ի տակ, $34 \times 21,5$ սմ, ֆորմատի, թղթաքանակ—140, նյութը—թուղթ րաց կապույտ երանգով, լավ կազմով, վիճակը շատ լավ, ժամանակը—1809, մարտի 10-ը, Նոր-Նախիջևան:

Ձեռագիրը կրում է հետևյալ վերնագիրը:

Եթե՛ղական իրախօսութիւն կամ գրութիւն առողջարար բուսոց շահն և գործածումն նոցին և ընդ մեացուցմամբ նկարաց բնական տեսակաց իւրաքանչիւր բուսոց համարեցեալ:

Ըստ բարձրագույն հրամանի յօրինեաց թշկական արհեստի դօկտօր (կամ թշկապետ) և հոշակաւոր հմտութեան պրօֆեսօր Մագսիմովիչ Նեստոր Ամբոտիկ:

Տպեալ ի տպարանն ծովային շէախեթնի Կաթեթսկու Կօրբուսն, ի՛ քաղաքն Ս. Պետերբուրգ, 1783 ամիս:

Բնագիրն այսպէս է կոչվում՝ „Врачебное веществословие или описание целительных растений, во врачестве употребляемых, с изъяснением пользы и употребления оных и присоединением рисунков, природному виду каждого растения соответствующих“, четыре части со 134 рисунками, СПб. 1783 г.

Ձեռագրի 117-րդ էջի վրա գտնվում է թարգմանչի հիշատակարանը, ուր գրված է.

«Աւարտեցաւ Ի. հատոր բօթանիկական գիրքս ի 1809 և ի մարտի 10-ի նախիջևան քաղաքի, ձեռմամբ և ի ողեսաց լեզուէ թարգմանութեամբ Սրապիոն նուաստ սարկաւագ Առաքելեանիս, զոր ոչ եթէ վասն ինչ պարծանաց, այլ յաւետ վասն ի պետս օգտակարութեան ազգին մերոյ, զի ոչ ինչ է ի վերայ երկրի որ չէ պիտոյ իրի ինչ, այլ մանավանդ ոչ գոյ ի լեզու մեր այսպիսի խստազննին փիլիսոփայութիւն վասն որոյ ի պատահիլն Ձեր, եթէ գտանիցեք ի սոսա ինձ ի թարգմանութիւնս, մի ունիցիք ի մեղադրանս . . . րայց տկարութիւն մեր այսու խոստովանի ի թարգմանութիւնս զի ոչ գտաք մեք զանազան յորջորջմունս լեզուան ողեսաց, զանուանս ծաղկանց, խոտոց և այլն, այլև փոխաբերական զանուանս յորս անթիւ ի լեզուս նոցա են նորակերտ գեղորելից, որք ի լեզու մեր ոչ գիտեալ եղաք նոցա են լեզուաւ և կամ լաթինացոց: Որև ի շահաւորեալն ձեր ի սմանէ յիշեցսցեք մեով հայր միբիւ զ պարոն Պարապետ ճարտար թիշկն նորոյս նախիջևանու ընդ համայն ազգայինս իւր որոյ յորդորմամբ և սեպհական արդեամբն եղև թարգմանեալ ի նուաստութեան մերմէ . . . »:

Ամենայն հավականությամբ թարգմանիչը Եթե՛ղական բուսարանություն» աշխատության երկրորդ և երրորդ գրքերից առաջ, թարգմանած պետք է լիներ նաև այդ նույն աշխատության առաջին գիրքը: Դժբախտաբար այդ թարգմանությունը դեռևս մեզ չհաջողվեց գտնել:

Ն. Մ. Ամբոտիկի մյուս աշխատությունը, որը թարգմանվել է հայերեն լեզվով, նրա «Физиология или естественная история о челове-

1. Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Ձեռագրատան (Մատենադարան)՝ ձեռագիր № 9285, էջ 117:

ԿԵ. . .⁴, խորագիրը կրող աշխատությունն է — այն թարգմանել է նույնպես Ս. Առաքելյանը 1814 թվականին Ս. Պետերբուրգում:

Թարգմանությունը կրում է հետևյալ վերնագիրը՝

«Բնագնությունը բնութենական հանգամանաց մարդոյ:

Բնագնությունը կամ բնութենական հանգամանք մարդկայինք, նորին յղացման, ծննդեան բնութեան կազմուածոյ մարմնոյն, տարբերութեան հասակին, գործառնութեան կենացն զանազանութեան սեռի ի մարդն ցաւոցն ծերութեան և մահուան Յօրինեալ ի (Նեստոր Մաքսիմովիչ Ամբոդիկէ) . . . Եւ ի ողոսաց լեզուե թարգմանեալ ի հայ բարբառ ի Սրապիոն Առաքելեան աւագ սարկաւագ է հայոց ի հայրապետութեան որբոյ Աթոռոյն Էջմիածնի Տերն Եփրեմայ Սրբազնակատար կաթողիկոսի . . . Եւ յառաջնորդութեան Ռուսաստանեաց հայոց տերն Յօհաննու սրբազան Արքեպիսկոպոսի:

Ի Ս. Պետերբուրգ 1814¹»

Թարգմանությունը կատարված է 1787 թվականի հրատարակությունից, որի ողոսերեն վերնագիրն է «Физиология или естественная история о человеке касательно его зачатия, рождения тела различных возрастов, деяний, жизни различий в человеческом роде примечаемых, болезней, старости и смерти. Для пользы российского юношества трудами и иждивением Нестора Максимовича-Амбодика. Медицины доктора и профессора впервые напечатанная при типографии Морского Шляхетного Кадетского Корпуса в городе Сп. Петра 1787 г.».

Ձեռագիրը բաղկացած է ընդամենը 68 մեծագիր էջերից (40×25) ֆորմատի, որոնցից գրված են 64 էջ. Նյութը — թուղթ, բաց կապույտ երանգով, լավ կազմով, վիճակը շատ լավ, նորագույն ձեռագիր շղագիր:

Այս թարգմանություններն ըստ արժանիության գնահատելու համար անհրաժեշտ է թուղթիկ մի ակնարկով վերհիշել, թե ինչ բժշկական գրականություն կար մինչ այդ հայերեն լեզվով:

Հատկապես իրանա-թյուրքական բարբարոս բռնապետությունների հարյուրամյակների ընթացքում մեր ժողովրդի համար ստեղծվում է ծանր կացություն: Աշխատավորության շահագործումը և կեղեքումը անասելի չափերի է հասնում, երկրի ներսում էլ ավելի է սրվում դասակարգային պայքարը: Մյուս կողմից՝ անընդհատ պատերազմների ընթացքում քանդվում, ավերակների կույտի են վերածվում երբեմնի զարգացած քաղաքները, կրակի մատնվում, ոչնչացվում են դարերի ընթացքում գիտության և կուլտուրայի բնագավառում հայ ժողովրդի ստեղծած հուշարձանների զգալի մասը: Հիշյալ պայմաններում ոչ մի խոսք չի կարող լինել ստեղծագործական մտքի զարգացման մասին: Այդ է պատճառը, որ XIV դարից սկսած մինչև XIX դարի սկզբները մեզ մոտ Հայաստանում ոչ միայն նոր գիտական արժեքներ կայացնող աշխատություններ չեն ստեղծվում, այլ, ինչպես ցույց են տալիս սկզբնաղբյուրները, բժշկագիտությունը գնալով կորցնում է իր գիտական-ոացիոնալ բովանդակությունը: Ավելին, պահպանված ձեռագիր բժշկականներում (եթե դրանք արտագրու-

¹ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Ձեռագրատուն (Մատենադարան), ձեռ. № 4229:

թյուն չեն XI—XIV դարերում գրված աշխատությունները), զգալի չափով տեղ են գտել միստիկա-մոգական, ախթարական, գիտության հետ ոչ մի կապ չունեցող, շաղկապանական բնույթի պրիոմների նկարագրություններ:

Հայ պրակտիկ բժիշկները XV—XVIII դարերում լավագույն դեպքում առաջնորդվում էին միջնադարյան հայ բժիշկ Ամիրգովլաթի աշխատություններով, որոնք ոչ միայն չէին արտահայտում բժշկագիտության բնագավառում ձեռք բերված նվաճումները, այլ նրանց մեջ տեղ են գտել միստիկա-մոգական, ախթարական էլեմենտներ:

XVIII դարի վերջին, Ռուսաստանում ապրած և գործած բժիշկ Պետրոս Կալանթարյանը, իր «Համառոտ բժշկարանով» (տպ. 1793 թ. Նոր-Նախիջևանում) առաջինն էր, որ հաղթահարելով հիշյալ դարերի հայ բժշկականության մտքի սահմանափակությունը և հետամնացությունը ոռոսական և եվրոպական բժշկության բարերար ազդեցության տակ, ձգտեց հայ ժողովրդին ծանոթացնել բժշկագիտության նվաճումներին:

Հայ միջավայրում ոռոսական առաջավոր բժշկագիտության նվաճումների տարածման գործում նշանակալից գեր ունեին կատարելու Ն. Մ. Ամրոգիկի աշխատությունների վերը նշված թարգմանությունները:

Ն. Մ. Ամրոգիկը իր աշխատություններում պաշտպանում և զարգացնում էր հիվանդությունների կանխարգելման (պրոֆիլակտիկ) ճիշտ ուղղությունը: Այս կապակցությամբ նա իր «Բժշկական իրախոսություն...» աշխատության առաջարկում գրում է հետևյալը.

«Բժշկական արհեստը բաժանվում է երկու մասի.

Առաջինը ցույց է տալիս առողջության պահպանման վերաբերյալ եղող շահավետ և կարևոր կանոնները և կոչվում է մարմնի առողջությունը պահպանող արհեստ: Ըսկ երկրորդը վերաբերում է նրան, թե ինչ կերպով և ինչ միջոցներով է հնարավոր ցավերը մարդկային ցեղը ոչնչացնելու անկարող դարձնել և առողջացնել»¹:

Ի դեպ, պետք է նշել, որ պրոֆիլակտիկական ոռոսական բժշկագիտության գլխավոր և բնորոշ կողմն է եղել, և այդ հանգամանքը խիստ բարձրացրել է նրա առաջադիմական գիտական նշանակությունը: Մարդու «առողջության պահպանումն» կամ պրոֆիլակտիկական պրոֆ. Ն. Մ. Ամրոգիկը ավելի բարձր է գնահատում և համարում է առաջնակարգ բնագավառ, քան հիվանդությունների բուժումը:

Զափազանց ուշադրավ է Ն. Մ. Ամրոգիկի այդ աշխատության մեջ՝ բժշկականության զարգացման և առաջ մղման համար, անատոմիայի և ֆիզիոլոգիայի կարևորության մասին արտահայտած միտքը:

Ամրոգիկը իր ունկնդիրներին սովորեցնում էր, որ հիվանդությունը լավ ըմբռնելու և հասկանալու համար, պետք է լավ գիտենալ առողջ մարդու նորմալ անատոմիան և ֆիզիոլոգիան: Հարցի այսպիսի դրվածքը չի կորցրել իր կարևոր նշանակությունը նաև մեր օրերում: Բժշկական կրթության սիստեմում նման պահանջի առաջ քաշումը ավելի է արժեքավորվում, երբ հիշում ենք, որ Արևմտյան Եվրոպայի երկրներում ոչ միայն XVIII դարում, այլ մինչև XIX դարի առաջին կեսը անատոմիան արհամարհված էր: Այս առթիվ հետաքրքրական է ոռոս հանճարեղ վիրարույթ

¹ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Զեռագրատուն (Մատենադարան), ձեռագիր № 9285, էջ 13:

Ն. Ի. Պիրագուլի վկայությունը: Հանրահայտ է, որ 1833 թվականին լինելով Իեռլինի մի շարք կլինիկաներում, գիտելով գերմանացիների կատարած օպերացիաները, Ն. Ի. Պիրագուլը խիստ կերպով դատապարտել է նրանց՝ անատոմիան չգիտենալու, օպերացիոն տեխնիկայի հետամնացություն համար:

Նեստոր Մակսիմովիչ Ամբուբիկի վերը նշած աշխատությունների հայերեն թարգմանությունների միջոցով XIX դարի սկզբին հայ բժշկիկները հնարավորություն ստացան ծանոթանալու նրա առաջադիմական հայացքներին:

Մեզ հետաքրքրող աշխատության գլխավոր արժեքը կայանում է նրանում, որ նա ընդգրկում է իր ժամանակի բժշկականության մեջ գործածվող բոլոր դեղաբույսերի և դեղանյութերի վերաբերյալ մանրամասն գիտական տվյալներ: Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձնում ուսական ֆլորայի դեղաբույսերի փորձարկման և օգտագործման վրա: Դեղաբույսերը նկարագրում է ամենայն մանրամասնությամբ, կիրառելով բույսերի լիննեյան սխեմատիկան: Նա տվյալներ է հաղորդում դեղաբույսերի աճման վայրի մասին, և նրանցից դեղանյութեր պատրաստելու ամբողջ տեխնոլոգիան: Այնուհետև ելնելով իր բժշկականության բնագավառի և րկարամյա աշխատանքի փորձից, խորհուրդ է տալիս, թե որ հիվանդության դեպքում ինչ դեղանյութ պետք է նշանակել, նրանց օգտագործման ձևերը ու կերպերը: Հակառակ իր ժամանակի շատ երկրներում ընդունված չափազանց բարդ՝ 10—20 և ավելի նյութերով դեղագրեր կազմելու սովորության, նա դեղագրերը կազմում է 2—3 դեղանյութերից, միանգամայն պարզ և հասկանալի ձևով: Բացի դեղաբույսերի ուսերեն անունից, նա նշում է նաև նրանց լատիներեն, հունարեն, գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն և անգլերեն անունները:

Գիտությունների վաստակավոր գործիչ պրոֆ. Դ. Մ. Ռասիյսկին «Врачебное дело» № 8, 1949 թ. տպագրված իր «Դեղաբույսեր որոնելու և ուսումնասիրելու բնագավառի հայրենական գիտնականների առաջնությունը» հոդվածում Ն. Մ. Ամբուբիկի մեզ հետաքրքրող աշխատության վերաբերյալ գրում է հետևյալը:

«... Մակսիմովիչի մոտ արդեն չեն հանդիպում գիտականորեն չուսումնասիրված դեղաբույսերի կամ էմպիրիկ դեղամիջոցներ: Ըր ձեռնարկում, այդ առաջին ուս ֆիտոթերապևտը նկարագրում է խստորեն որոշված բույսերի տեսակները, և նշում է նրանց բազմակողմանի հետազոտման անհրաժեշտությունը, փորձարկելով նրանց (ազդեցությունը) ինչպես կենդանիների, այնպես էլ մարդկանց վրա»:

Աշխատանքը գրված է պարզ և ժողովրդին մատչելի լեզվով, նպատակ ունենալով լինել օգտակար ոչ միայն բժիշկներին և դեղագործներին, այլ հիմնականում ժողովրդական լայն շրջաններին: Այս առթիվ Ամբուբիկը գրում է.

«... Հեռավոր լայնատարած ուսաց կայսրության տերությունների գավառս՝ ի հասապայս բնակողաց ուր տակաւին և մինչև ցարդ սահմանեալ ապտիկ ոչ ունին. . . մարդկանց նոյն բժշկական խոտովք օգնել և մանավանդ հմուտ բժիշկ ոչ լինի: Հիվանդաց որքան կարելին է օգնել և բավականութիւն տալ»¹:

¹ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Զեռագրատուն (Մատենադարան), ձեռագիր № 0383, էջ 7—8:

Ինչպես տեսնում ենք, այս տողերում չափազանց պարզ է պատկերվում իր ժողովրդին անսահման նվիրված, բարոյապես բարձր գիտնականի պատկերը: Նա գիրքը գրելիս ի նկատի է ունեցել հատկապես լայնատաբած երկրի ծայրամասային բնակչության առողջապահական գործի անմխիթար վիճակը, ուր չկան հիվանդանոցներ, դեղատներ և փորձառու բժիշկներ: Ն. Մ. Ամբուլիկը, որպես հումանիստ բժիշկ և ջերմ հայրենասեր իր „Искусство повивания, или наука о бабичьем деле“ (Մանկաբարձություն) գլխավոր աշխատությունը որպես էպիգրաֆ գրում է՝ «Ժողովրդի բազմացման համար առողջ դատողությունը թելադրում է ավելի շուտ հոգալ նորածին երեխաներին պատշաճ ձևով պահպանելու մասին, քան չմշակված հողերի վրա բնակեցնել անհայտ, օտարերկրյա եկվորներին», որը ուղղակի հարվածում է Եկատերինա 2-րդ թագուհու վարած քաղաքականությանը: Այս տողերով անվախ գիտնականը թագուհուն պարզապես կշտամբում է այն բանի համար, որ վերջինս զբաղված է գերմանացիներին Վոլգայի արգավանդ ափերին բնակեցնելու հոգսերով, բոլորովին չի մտահոգվում ժողովրդի առողջապահության, նորածինների պաշտպանության կազմակերպելու գործով:

Ինչպես պարզվում է կատարված թարգմանության մեր ընդհանուր ձանդթությունից, բավական հաճախ թարգմանիչը գործածում է ուղղակի ողուսական կամ բնագրի մեջ տեղ գտած այլ ծագում ունեցող բառ-տերմիններ՝ ողուսական արտասանությամբ: Այսպես, օրինակ՝ միայն օշինդրին վերաբերող նկարագրության մեջ, որը գրավում է հինգ ընդարձակ էջ, մենք հանդիպում ենք՝ «վօդկա», «նալիվօք», «փիվա», «սոկ», «պրիպարկա», «սուդորոդ ցալ», «պէլին» քրօդիցայ, «պօստրել ցալ», «կուպարոս», «լիմօն», «նաշատիր», «չայ», «սիրոպ», «կրիստալիզացիի աղ» և այլն: Վերին աստիճանի ուշագրավ է, սակայն, այն հանգամանքը, որ մեր թարգմանիչը տերմինաշինարարական նոր փորձ է կատարում և ողուսական բառ-տերմինի հիման վրա ստեղծում է հայերեն գիտական բժշկական նոր բառ-տերմիններ:

Այդպիսիներից են.

- „темножелтый“ — «մթնադեղին»
- „темнозеленый“ — «մթականաչ»
- „кровоносные“ — «արիւնակիր»
- „каменная болезнь“ — «քարեցալ»
- „болезни живота“ — «փորային ցալ»
- „многокровая“ — «բազմարիւն» և այլն:

Ուրիշ դեպքերում ընթերցողին ավելի հասկանալի լինելու նպատակով, թարգմանիչը գործածում է և հայերեն և ողուսերեն տերմիններ՝ «սոկ», «հիւթ», «օղի», «վօդկա» արարական «եարաղան» տերմինի փոխարեն գրում է «վեղնացալ» և այլն: Սակավ դեպքերում գործ է ածված նաև այսպես կոչված արարական բժշկականության արսենալից փոխ վերցված մի շարք բառ-տերմիններ: Այսպես, օրինակ՝ «հունդ», «մաջուն», «բլղամ», «նուղլայ», «սանջու», «չամ սախզ», «արաղ» և այլն: Դրանք մտեւ են մեր բժշկական գրականության մեջ դեռ միջին դարերում, երբ արար-

¹ Э. Конюс, Истоки русской педиатрии, 1946, Москва, стр. 148.

ները գրավելով ամբողջ Արևելքի և մասամբ էլ Արևմուտքի երկրները, տարածեցին այդ երկրների վրա իրենց քաղաքական և անտեսական էքսպանսիան, արարական լեզուն դարձավ կուլտուրայի, գիտությունների և գրականության բնագավառում պաշտոնական լեզու: Պարզ է, որ հայերը զերծ չէին կարող մնալ Արևելքում քաղաքացիական իրավունք ստացած արարական բժշկական տերմինարանական ազդեցությունից: Իմիջայլոց արարական բժշկականության բառ-տերմինների գործածությունը գնալով աստիճանաբար նվազել է հայ բժշկական գրականության մեջ, բայց նրա հետքերը պահպանվել են մեզ մոտ մինչև XIX դարի վերջերը:

Անշուշտ, այս կարգի հետաքրքրական հարցերը պետք է գրավեն մեր լեզվաբանների ուշադրությունը:

Այժմ մի քանի խոսք Ամբրոջիկի «Физиология или естественная история о человеке...» «Բնագնություն բնութենական հանգամանց մարդու...» աշխատության և սույն թարգմանության մասին: Իր աշխատությունը գրելիս Ն. Մ. Ամբրոջիկը նպատակ է ունեցել երիտասարդությանը ծանոթացնելու բիոլոգիայի՝ տվյալ դեպքում սաղմնարանության հարցերի մատերիալիստական գիտական ըմբռնման հետ, որը քննվող ժամանակաշրջանի համար, համանալիզի, ունենալ աշխարհայացքային կուլտուրալիստական խոշոր նշանակություն: «Ամբրոջիկը հանգիստանում է իր ժամանակի համար բժշկական և բնագիտական գիտությունների կարկառուն պապուլյարիզատոր, որը չափ քան է արել բժշկական գիտելիքները տարածելու համար»¹:

Հիշյալ աշխատությունը բաղկացած է 12 պարակներից: Առաջին պրակում խոսելով մարդու բնության մեջ ունեցած գերի մասին, հեղինակը ասում է, որ մարդը օժտված է բանականությամբ, որի շնորհիվ էլ նա ընդունակ է ստեղծագործելու և որպես այդպիսին, իշխում է բնության վրա:

Երկրորդ պրակում, որ կրում է «Յաղագս յղացման և գոյացութեան մանկան» վերնագրում հեղինակը մի կողմ թողնելով բեղմնավորման և սաղմի առաջացման վերաբերյալ գոյություն ունեցող բոլոր տեսակի սպեկուլյատիվ տեսակետները, կանգ է առնում հարցի գիտական, մատերիալիստական ըմբռնման վրա:

Երրորդ պրակում, որ կրում է «Յաղագս յղեաց և յղացելոց» խորագիրը, հեղինակը ամենայն մանրամասնությամբ նկարագրում է հղիության առաջին օրերից մինչև վերջը, հղի կնոջ մոտ հանգես եկող սուրյեկտիվ և օբյեկտիվ երևույթները: Մեծ արժեք են ներկայացնում Ն. Մ. Ամբրոջիկի նորածին երեխաների և ծննդկան մայրերի հիգիենային վերաբերյալ տված խորհուրդները, որոնք իրենց նշանակությունը չեն կորցրել նաև մեր օրերում: Հեղինակը գեմ է նորածին երեխաներին ամուր պարուրելուն, պատճառարանելով, որ դա կարող է առաջ բերել մարմնական զանազան ալլանգալիություններ՝ զարգացման գեֆեկտներ և խանգարել նրանց նորմալ աճը: Նա խորհուրդ է տալիս նորածիններին չթափահարել օրորելու միջոցով, շուտ-շուտ լողացնել և սպիտակեղենը փոխել, կերակրել շ—՝ ժամը մեկ անգամ, իսկ գիշերները բոլորովին չկերակրել, նա

¹ ԵՇԾ, տ. 2, 1950.

սլահանջիւ է սենյակը սլահել մաքուր և օրական մի քանի անգամ օդափոխել, երեխային դուրս բերել մաքուր օդի և այլն: Նեստոր Մակսիմովիչը գեմ է եղել մանուկներին մարմնական պատժի միջոցով դաստիարակելու եղանակին:

Եթե մենք նկատի ենք ունենում այն հանգամանքը, որ քննվող ժամանակաշրջանում Հայաստանում բացակայում էր ժողովրդի սանիտարական-առողջապահական գործի կազմակերպված որևէ սպասարկման ձև՝ հիվանդանոց, բուժարան կամ դեղատուն: Երկրում չկային բարձրագույն կրթություն ստացած բժիշկներ, և մյուս կողմից եթե մենք աչքի առաջ ենք ունենում այն փաստը, որ բոլորովին բացակայում էր բժշկական գիտական մատչելի գրականություն, այն ժամանակ միանգամայն հասկանալի կդառնա XVIII դարի երկրորդ կեսի ողուս նշանավոր գիտնական Ն. Մ. Ամբոգիկի աշխատություններն հայերեն լեզվով թարգմանելու շնորհակալ գործի խոշոր արժեքը:

Հայ հասարակությունը շատ բարձր է գնահատել Ն. Մ. Ամբոգիկի աշխատությունները՝ Սրապիոն Առաքելյանի կատարած թարգմանությունը: Այդ աշխատության ժամանակին չհրատարակվելու (որի հանգամանքները մեզ համար մնում են անհայտ) պատճառով, մարդիկ արտագրել-բազմացրել են Ս. Առաքելյանի թարգմանված օրինակը: Այս վկայում է մեր ժողովրդի մեջ ողուս առաջագեմ գիտնական, դեմոկրատ և ջերմ հայրենասեր բժիշկ Ն. Մ. Ամբոգիկի վայելած հարգանքի մասին:

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Ձեռագրատանը (Մատենագարան) մեզ հաջողվեց հայտնաբերել քննարկվող երկի երկու ձեռագիր օրինակ ևս: Դրանցից մեկը արտագրել է Դրիմի Նարասուհի զարքաղաքի բնակիչ Թորոս Հովհաննիսյանը (Ձեռագիր № 7884): Մյուս օրինակը արտագրել է նույն քաղաքի բնակիչ Մուրատչիկ Մուրադյանը (Ձեռագիր № 8249) 1839 թվականին:

Այսպիսով, եթե իրանա-թյուրքական բարբարոս բռնապետությունների ծանր լծից, հայ ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից ազատելու համար, մեր առաջագեմ մարդիկ միակ ուղին ողուս մեծ ժողովրդի հետ միանալն էին համարում, ապա Ն. Մ. Ամբոգիկի վերը նշած աշխատությունների հայերեն թարգմանությունները նշում էին հայ հասարակությանը՝ բժշկական-սանիտարական բնագավառի տգիտության հասնող հետամնացությունից դուրս բերելու, ողուս մեծ ժողովրդի ստեղծած բժշկագիտության առաջագեմ մտքին ունկնդրելու, նրանից սովորելու ճիշտ ուղին: